ՆԱԽԱԳԻԾ

Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր
ՔՆՆԻՉՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է 2015թ. քննիչների վերապատրաստման ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2015թ. մարտի 2-ի թիվ 1-Ն որոշման հիման վրա:
3. Ծրագիրը նպատակաուղղված է քննիչների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը քրեական իրավունքի, քրեական դատավարության, դատական փորձաքննությունների, ինչպես նաև կրիմինալիստիկական տակտիկայի ոլորտներում:
4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:
5. Ուսումնառության ժամաքանակը վերապատրաստվող յուրաքանչյուր քննիչի համար սահմանվում է 60 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է 8 աշխատանքային օրերի ընթացքում (ուրբաթ օրվանից մինչև հաջորդ շաբաթ օրը՝ ներառյալ առաջին ուրբաթ օրվան հաջորդող շաբաթ օրը):
6. Ուսումնառությունն իրականացվում է 15 խմբերով՝ հունիսի 19-ից մինչև նոյեմբերի 14-ը ներառյալ:

II. Դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) ցանկ

N	**Դասիչ**	**Անվանում**	**Ժ/ք**
1	Q-021-15	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը	20
2	Q-022-15	ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը	20
3	J-014-15	Դատական փորձաքննության արդի հարցերը	10
4	J-016-15	Դեպքի վայրի զննության տակտիկան	10

III. Դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) համառոտ նկարագիրը

1. Q-021-15. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումները, ինչպես նաև քրեական իրավունքի ոլորտում նոր իրավական դիրքորոշումները քննիչներին մատուցելու և դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է քրեական նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգով նախատեսված, ինչպես նաև ընթացիկ փուլում առաջացող այլ հիմնախնդիրների լուծման ոլորտում օրենսդրական և իրավակիրառ փորձի ներկայացումը, դրանց զարգացման միտումները և հեռանկարները, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակությունը: Մասնավորապես, դասընթացն ընդգրկում է հանցավոր արարքների ճշգրիտ որակման հարցերը:

2. Q-022-15. ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը

Դասընթացը անհրաժեշտ է քրեական դատավարության ոլորտում նոր իրավական զարգացումները, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները մատուցելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է ՀՀ քրեական դատավարության առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնահարցերը, ինչպես նաև քրեական դատավարության ոլորտում արդիականություն ունեցող այլ հարցերը:

3. J-014-15. Դատական փորձաքննության արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է փորձաքննությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, համարժեք եւ արդյունավետ փարձաքննությունների նշանակման կարողությունների ձեւավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է քրեական վարույթներում փորձաքննությունների նշանակման հիմքերի, կարգի, բովանդակության, կատարման եւ արդյունքների գնահատման վերաբերյալ հիմնահարցերը:

4. J-016-15. Դեպքի վայրի զննության տակտիկան

Դասընթացը պայմանավորված է դեպքի վայրի զննության քննչական գործողության կատարման կարողությունների կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է դեպքի վայրի զննության կատարման գործնական հարցերը: